Էլեկտրոնային գրատախտակը նախատեսված է համակարգչի աշխատանքային սեղանի պատկերը լուսացրի (պրոյեկտորի) օգնությամբ էլեկտրոնային գրատախտակի մակերևույթին արտացոլելու համար, այն կիրառվում է համակարգչի և լուսացրի հետ (նկ.1, 2):

Նկ.1

Նկ.2

Համակարգչի և գրատախտակի կապը երկկողմանի է:

Մկնիկի փոխարեն օգտագործվում է մատը կամ գրչածայրը:

Առանց գրատախտակից հեռանալու, մարկերի կամ մատի օգնությամբ կարելի է աշխատել պատկերի հետ՝ փոփոխել գունավոր մարկերների օգնությամբ, նշումներ կատարել և այլն:

Յուրաքանչյուր էլեկտրոնային գրատախտակ ունի իր ծրագիրը, որի օգնությամբ կարելի է կատարել տարբեր աշխատանքներ՝ պարզ նկարելուց մինչև բազմաէջանոց դասեր:

Բոլոր փոփոխությունները համակարգչում գրանցվում են համապատասխան նիշքերում (ֆայլերում), որոնք կարող են հետագայում խմբագրվել:

Էլեկտրոնային գրատախտակները լինում են նաև ակտիվ և պասիվ։ Ակտիվ էլեկտրոնային գրատախտակն անհրաժեշտ է միացնել հոսանքի աղբյուրին և համակարգչին։

Պասիվ էլեկտրոնային գրատախտակը միացման կարիք չունի և հեշտությամբ կարելի է տեղափոխել (նկ.3, 4)

Նկ.3

Նկ.4